31 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2013 ՀԻՆԳՇԱԲԹԻ 187(5270)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# Ալեքսանդերը եւ Կլեպերը գլխավոր նպատակ են համարում աշխարհի ղեկավարների լրտեսումը

*«Տվյալների զգալի մասը մեզ փոխանցել են եվրոպական հատուկ ծառայությունները»*

**ԱՄՆ-ի Կոնգրեսում սկսվել են լսումներ, որոնց ընթացքում ամերիկյան հատուկ ծառայությունների ղեկավարները պատասխանում են եվրոպական դաշնակիցների, ինչպես նաեւ ԱՄՆ քաղաքացիների լրտեսման հետ կապված մեղադրանքներին: Ինչպես հաղորդում է BBC News հեռուստաալիքը, կոնգրեսականները իրենց հարցերն ուղղում են գլխավորապես Ազգային անվտանգության գործակալության (ԱԱԳ) ղեկավար Քիթ Ալեքսանդերին եւ Ազգային հետախուզության տնօրեն Ջեյմս Կլեպերին:**



**Հարցերին պատասխանելիս գեներալ Ալեքսանդերը մասնավորապես հայտարարել է, թե ԱԱԳ-ն գաղտնալսել է եվրոպական դաշնակից պետությունների ոչ թե միլիոնավոր քաղաքացիների, այլ միայն երկրների ղեկավարների հեռախոսները: Նրա խոսքերով, դա սովորական բան է ոչ միայն ԱՄՆ-ում, այլեւ ուրիշ պետություններում:**

**Անդրադառնալով եվրոպական լրատվամիջոցների այն հրապարակումներին, թե ԱԱԳ-ն ԵՄ տարբեր երկրներում գաղտնալսել է միլիոնավոր հեռախոսազրույցներ, Ալեքսանդերն ասել է, թե ԱԱԳ-ն նման բան չի արել, եւ որ ԵՄ միլիոնավոր քաղաքացիների հեռախոսազանգերի հետ կապված տվյալների զգալի մասը հավաքել եւ ապա ԱԱԳ-ին են փոխանցել «եվրոպական հատուկ ծառայությունները», իսկ եվրոպական լրատվամիջոցները «ամեն ինչ շփոթել են»:**

*Տես էջ 2*

# «Գուցե վերեւից ներքեւ փոխե՞ն ամբողջ կառավարությունը»

*Հայաստանի գործատուների միության նախագահը անդրադարձավ բյուջե-2014-ին եւ այլ տնտեսական հարցերի*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2014-ի պետական բյուջե, Մաքսային միություն-Եվրոմիություն, փոքր բիզնես, շրջանառության հարկ, աշխատավարձերի սանդղակ, գործազուրկների նպաստի վերացում եւ այլն: Երեկ լրագրողների հետ հանդիպմանն այս ամենի մասին խոսեց Հայաստանի գործատուների միության նախագահ **Գագիկ Մակարյանը**:

Բյուջե 2014-ը տարբերվում էր նրանով, որ կազմվել է ծրագրային մոտեցմամբ: Գագիկ Մակարյանը նշեց, որ ինքը մշտապես կարեւորել է յուրաքանչյուր տարվա բյուջեի կապը նախորդ տարվա բյուջեի հետ, ինչը չի եղել, եւ այս անգամ կառավարությունը փորձել է դա անել: Մուտքերը եկող տարի նախատեսվում է ավելացնել 34 մլրդ դրամով, որը նախորդ տարվա 112 մլրդ դրամի համեմատ զգալի տարբերություն է: Սա միության նախագահի մատնանշած առաջին էական տարբերությունն է բյուջե-2013-ի նկատմամբ: Երկրորդն այն էր, որ 2014-ին բյուջեի դեֆիցիտն ավելանալու է 5,5 մլրդ դրամով, երրորդը, որ կառավարությունը նախատեսում է մուտքերն ավելացնել առանց հարկային բեռի ավելացման, այսինքն՝ ստվերի բացահայտման եւ տնտեսական աճի հաշվին: «Խոսվում է շինարարության աշխուժացման մասին, էկոնոմ դասի բնակարաններ կառուցելու մասին, բայց չի նշվում, թե ինչ տեխնոլոգիաներով են դրանք կառուցվելու, ձանամեկուսիչ, ջերմամեկուսիչ նյութեր կիրառելո՞ւ են, թե՞ այդ բնակարանները կառուցվելու են բնակմակերեսի փոքրացման կամ որակի հաշվին», եկող տարվա մասին խոսելով՝ շարունակեց Գագիկ Մակարյանը:

Արտաքին պարտքից 3,1 մլրդ դոլարը մաքուր պետական պարտքն է, եւ Գագիկ Մակարյանին մտահոգում է, թե պետական աշխատողների աշխատավարձերի բարձրացմամբ ավելանալո՞ւ է պետական պարտքը: Նրան նաեւ մտահոգում էր, թե ինչպե՞ս է պետությունը ստվերից գումարներ բերելու, դա արվելու է փո՞քր բիզնեսից: Գործատուների միության նախագահի կարծիքով, պետական քաղաքականությունը փոքր բիզնեսի նկատմամբ կրում է էմպիրիկ բնույթ, այլ ոչ թե համակարգային:

*Տես էջ 2*

# ԵՄ հատուկ ներկայացուցիչը Երեւանում



**Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը երեկ ընդունել է Հարավային Կովկասի եւ Վրաստանի ճգնաժամի հարցերով Եվրոմիության հատուկ ներկայացուցիչ Ֆիլիպ Լեֆորին: Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ հանդիպմանն անդրադարձել են Հայաստան-Եվրոմիություն հարաբերություններին, ԵՄ աջակցությամբ մի շարք ուղղություններով մեր երկրում իրականացվող բարեփոխումներին:**

**Զրուցակիցները մտքեր են փոխանակել տարածաշրջանային զարգացումների, ԼՂ հիմնախնդրի կարգավորման գործընթացի ներկայիս վիճակի վերաբերյալ: Երկուստեք ընդգծել են հիմնախնդրի խաղաղ եւ միջազգային սկզբունքների հիման վրա կարգավորմանն ուղղված ջանքերը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների բանակցային ձեւաչափում շարունակելու կարեւորությունն ու անհրաժեշտությունը:**

**Լեֆորը հանդիպում է ունեցել նաեւ Հայաստանի արտգործնախարարությունում: Արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի եւ ԵՄ ներկայացուցչի զրույցում անդրադարձ է կատարվել Հայաստան-Եվրոմիություն հարաբերություններին, տարածաշրջանային զարգացումներին:**

**ԵՄ հատուկ ներկայացուցիչը Հայաստանի արտգործնախարարին ներկայացրել է Բաքու կատարած այցի արդյունքները: Նախարար Նալբանդյանն էլ ուշադրություն է հրավիրել Ադրբեջանի ռազմատենչ հայտարարությունների եւ սադրիչ գործողությունների վրա:**

**Ֆիլիպ Լեֆորը վերահաստատել է Եվրոմիության աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերին՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը:**

**Ի դեպ, այսօր էլ Նալբանդյանը այցելելու է Բեռլին, որտեղ հանդիպումներ կունենա գործադիր իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչների հետ:**

**Վ. Պ.**

# Նոր մանրամասներ գորիսյան կրակոցներից

*Բուդաղյանները շարունակում են պնդել, որ կրակել է նաեւ Սուրիկ Խաչատրյանը*

**Բուդաղյանների փաստաբան Հայկ Ալումյանի խոսքերով՝ Սյունիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի տան մոտ տեղի ունեցած ողբերգական միջադեպը ներկայացնող նոր կադրերը մի շարք հարցերի պատասխան տալիս են: Նոր տեսագրությունը պատասխանում է ամենակարեւոր հարցին՝ ո՞վ է առաջինը կրակել եւ ո՞ւմ վրա: Նոր տեսագրությունում երեւում է նաեւ, թե մինչեւ Տիգրան Խաչատրյանի արձակած 3 կրակոցները Ավետիք Բուդաղյանն ինչ է արել:**

**«Նա գալիս է, որ տեսնի՝ եղբայրը եկել է, թե ոչ, նույնիսկ ավտոմեքենայից դուրս չի գալիս, Սուրիկ Խաչատրյանի կողմնակիցները մոտենում են նրան, պարզ երեւում է, որ անելիք չունի, ուզում է գնալ, Խաչատրյանի կողմնակիցները գալիս են, ու ինչ-որ խոսակցություն է սկսվում: Հետո Արտակ Բուդաղյանի մեքենան հայտնվեց, ու Ավետիքն իր մեքենայով փակեց ճանապարհը: Ավետիքը մեքենայից դուրս չի գալիս:**

*Տես էջ 2*

# ՀՀ. պաշտոնյաները՝ բյուրավոր, երկրի պարտքը՝ միլիարդավոր

*Անիի տարածաշրջանի Խարկով գյուղը մեր օրերում 1 բնակիչ ունի, 1980-ականների վերջերին գյուղն ուներ մոտ 200 բնակիչ*

Տարօրինակ մարդիկ ենք հայաստանաբնակներս, թեեւ կան նաեւ այնպիսիք, որոնք կողմ են արտառոց տարօրինակ գնահատականին: Ինչո՞ւ. որովհետեւ ինչքան էլ մեզ կառավարող բարձրագույն այրերը Աստծո յուրաքանչյուր օր նշում են երկրի տնտեսական ու ֆինանսական հաջողությունները, հայաստանաբնակներս դրանք թերահավատորեն ենք ընդունում, որակում ցանկալին իրական ներկայացնելու դրսեւորումներ, մի խոսքով՝արվածը չենք գնահատում:

*Տես էջ 4*



# Նոր մանրամասներ զոհերյան կրակոցներից

*1-ին էջից*

Կոնֆլիկտ է առաջանում Արտակի եւ Սուրեն Խաչատրյանի կողմնակիցների միջեւ, եւ միայն այդ ժամանակ է Ավետիք Բուդաղյանն առաջին անգամ մեքենայից դուրս գալիս եւ իր եղբորը՝ Արտակին հրելով իջեցնում ներքեւ», տեսագրությունն է ներկայացնում Հայկ Ալումյանը՝ հավելելով, որ այդ ժամանակ Խաչատրյանի բնակարանից երկու կին են դուրս գալիս, մեկը նախկին մարզպետի կինն է՝ Լորետա Բարսեղյանը:



«Այդ ժամանակ Տիգրան Խաչատրյանը դիրքավորվեց մեքենայի հետեւը եւ 3 անգամ կրակեց, մինչդեռ Ավետիք Բուդաղյանի գործողությունների մեջ ոչ մի ագրեսիա չի եղել, նա եղել է հաշտարարի դերում: Երեք կրակոցից երկուսը ուղղված են եղել Ավետիքի վրա, եւ այսօր մեզ ուզում են ասել, թե Ավետիք Բուդաղյանին սպանելով Տիգրան Խաչատրյանը գործել է անհրաժեշտ պաշտպանության պայմաններում», ասում է փաստաբանը:

Տեսագրության մեջ երեւում է, որ Ավետիք Բուդաղյանը զենքը վերցնում է միայն այն ժամանակ, երբ տեսնում է, որ եղբայրը ընկած է:

«Սկսվում է հրաձգություն, երկու կրակոց Բուդաղյանն է կատարել, մնացածը Խաչատրյաններն են կատարել: Ավետիք Բուդաղյանը կրակոցների ժամանակ որեւէ վտանգ չի ներկայացրել Սուրեն Խաչատրյանի եւ նրա կողմնակիցների համար, ընդհակառակը, ինքը եղբորը հեռացրել է՝ տեսնելով, որ վիճաբանության մեջ է մտել»:

Միջադեպի մոնտաժված տարբերակում ձայն չկա, կան սլաքներ, եւ երբ Տիգրան Խաչատրյանը դիրքավորվում է եւ կրակում, կադրերը լղոզված են, Արտակ Բուդաղյանը երբ գալիս է, սլաքներ կան, թե իբր հնչել են կրակոցներ, մինչդեռ կրակոց չի հնչել», ասաց փաստաբանը՝ հավելելով, որ նոր տեսագրությունում պատկերն այլ է:

Ավետիք Բուդաղյանի մարմնի վրա հայտնաբերվել է վնասվածք, որն ունի վերեւից ներքեւ ուղղություն, եւ դրանից հետո նա չէր կարող նպատակաուղղված գործողություն կատարել: «Դա եղել է վերջին կրակոցը, քննիչը չի կարողանում բացատրել, թե ինչպես է նա դա ստացել, չէ՞ որ բոլորը կանգնած են կամ վազվզում են»:

Հայկ Ալումյանը հավաստիացնում է, որ վերեւից ներքեւ ուղղությամբ Ավետիք Բուդաղյանի վնասվածքներից մեկը ամրապնդում է պաշտպանական կողմի այն կարծիքը, որ վերեւից՝ շենքից, ինչ-որ մեկը կրակել է: «Բազմիցս ասել ենք, որ հնչել է մեկ կրակոց, որի ձայնը զգալիորեն տարբերվում էր մյուս կրակոցների ձայներից: Փորձագետները հնարամիտ պատասխան տվեցին, թե տարբերվում է, որովհետեւ երկու ձայն համընկել է: Սակայն եթե անգամ դա ընդամենը համընկնում է, ապա պետք է բացատրվի, թե ով է երկրորդ կրակոցի հեղինակը: Ըստ պարկուճների՝ այդտեղ եղել է մեկ կրակոց, եթե համընկել է, որտե՞ղ է երկրորդ պարկուճը: Սա մեր հարցն է, որի պատասխանը քննիչը չունի», ասաց Ալումյանը՝ հավելելով, որ Արտակ Բուդաղյանը պնդում է, որ ինքը տեսել է տնից կրակոց: Այս ցուցմունքը հաստատվում է նաեւ Սուրիկ խաչատրյանի կողմնակիցների ներկայացրած այլ ցուցմունքներով, որ տանն ուրիշ մարդ չի եղել: Բուդաղյանները շարունակում են պնդել, որ պատուհանից կրակել է Սուրիկ Խաչատրյանը՝ Ավետիք Բուդաղյանին հասցնելով վերջին մահացու հարվածը:

Հ. Հ.

# «Գուցե վերեւից ներքեւ փոխե՞ն ամբողջ կառավարությունը»

*1-ին էջից*

Նա առաջարկեց միկրոբիզնեսն ընդհանրապես ազատել հարկերից, իսկ փոքր բիզնեսի համար շրջանառության հարկը իջեցնել ներկայիս 5 տոկոսից մինչեւ 2 տոկոսի:

Մեկ այլ մտահոգություն էլ վերաբերում էր առեւտրի ոլորտում սուպերմարկետների դերի ավելացմանը: Գագիկ Մակարյանի բնութագրմամբ, սուպերմարկետները կառուցվում են շուկաների տեղում, դրանով իսկ վերացնելով այդտեղ առեւտրով զբաղվողներին: Նա հետեւյալ հաշվարկը ներկայացրեց՝ Երեւանում միայն սննդի համար բնակչությունն օրական ծախսում է մոտ 2 մլն դոլար, տարեկան դա կազմում է մոտ 1 մլրդ դոլար: Այդ ծավալում սուպերմարկետների բաժինը հասնում է մոտ 150 մլն դոլարի, այդ թվում՝ միայն «Երեւան սիթի» սուպերամարկետներինը՝ 100 մլն դոլար: Մինչդեռ սուպերմարկետները հնարավորություն ունեն իրենց այս ծավալն ավելացնելու մինչեւ 600 մլն դոլարի:

Կառավարության գործունեության գնահատականը տալով՝ Հայաստանի գործատուների միության նախագահն ասաց, որ ինքը նախկինում էլ ասել է, որ կառավարությունում կարելի է պահել 4-5 նախարարի, մնացածին պետք է փոխել: Եթե դա չի արվում, ապա, Գագիկ Մակարյանի կարծիքով, «գուցե վերեւից ներքեւ փոխե՞ն ամբողջ կառավարությունը»:

«Ինչ կարծիքի՞ է Մաքսային միությանը Հայաստանի անդամագրվելու որոշման մասին» հարցին Գագիկ Մակարյանը պատասխանեց, որ Հայաստանը չպետք է խզի իր կապերը ԵՄ հետ, վստահություն հայտնեց, որ այդ կառույցի հետ անպայման պայմանագիր ստորագրվելու է, եթե ոչ նոյեմբերին, ապա ավելի ուշ, իսկ Մաքսային միությունում «մենք հեռանկար չունենք»: Մեր դիտարկմանը, թե Հայաստանի արդյունաբերողների եւ գործարարների միության նախագահ Արսեն Ղազարյանը հակառակ կարծիքի էր Հայաստանի՝ Մաքսային միությանը միանալու մասին, Գագիկ Մակարյանը պատասխանեց, որ դա պայմանավորված է մի քանի խոշոր արտադրողների հանգամանքով, որոնցից մեկն ասել էր, որ «Եվրոպային դեռ մի 50 տարի է պետք, որ իմանա մեր մասին»: «Թողնենք այս ֆեոդալական մտածելակերպը», ասաց Գագիկ Մակարյանը:

Գործազուրկների նպաստների վերացման մասին տրված հարցին Հայաստանի գործատուների միության նախագահը պատասխանեց, որ ինքը ճիշտ է համարում այդ նպաստների վերացումը, քանի այն մոտիվացիա չէր ստեղծում աշխատելու համար եւ այդ գումարները ստացողների առնվազն 70 տոկոսը դրան արժանի չէր:

Աշխատավարձերի թեմայի առնչությամբ Գագիկ Մակարյանը ճիշտ համարեց պետական համակարգի աշխատողների համար միասնական սանդղակը եւ նրանց աշխատավարձերի բարձրացումը, քանի որ իդեալական տարբերակի դեպքում նրանք նույնպես պետք է կարողանան ապրել եւ աշխատել իրենց աշխատավարձերով: Նա մտահոգիչ համարեց նվազագույն աշխատավարձի շեմի բարձրացումը, քանի որ նվազագույն աշխատավարձը կբարձրանա, բայց միջին աշխատավարձը չի բարձրանա:

ԳՆԱՀԱՏԱՆՔ

# Վարդան Գրիգորյանը ի պատվի Շոտլանդիայում

«Արմինյն Միրոր-Սփեքթեյթր» շաբաթաթերթի փոխանցմամբ՝ Դանֆերմլինում (Շոտլանդիա) հոկտեմբերի 14-ին հանդիսավոր արարողությամբ Էնդրու Քառնեգիի՝ շոտլանդացիներին նվիրած պուրակի մի հատվածը անվանակոչվել է «Վարդանի ճեմուղի»՝ ի պատիվ Նյու Յորքի Քառնեգի կորպորացիայի նախագահ, անվանի դասախոս, մանկավարժ եւ գիտնական Վարդան Գրիգորյանի: Դանֆերմլինը Էնդրու Քառնեգիի ծննդավայրն է, որտեղ գտնվում է Պիտենկրիֆ պուրակը, եւ որտեղ նա անցկացրել է իր կյանքի առաջին 13 տարիները նախքան 1848-ին Մ. Նահանգներ գաղթելը: «Այդ պուրակի նվիրատվությունը իմ կյանքի ամենանվիրական գործն է եղել, որը հոգեկան մեծ բավարարվածություն է պարգեւել ինձ», ասել է մի առիթով անվանի բարեգործն ու պողպատի արդյունաբերողը: 76 ակր (1 ակր = 4047 մետր2) տարածքով պուրակը Շոտլանդիայի ամենասիրված վայրերից է, ուր տարեկան 750 հազար հոգի է այցելում:

Արարողության ընթացքում Վարդան Գրիգորյանը, շնորհակալական խոսք ասելիս, նշել է. «15 տարի փորձել եմ շարունակել Էնդրու Քառնեգիի ժառանգությունը: Իրականում սա «Էնդրուի ճեմուղին» է: Մեծ պատիվ է ինձ համար կարողանալ շարունակել իսկական բարեգործության նրա առաքելությունը: Մեծապես զգացված եմ շոտլանդացի գործընկերների ազնիվ վերաբերմունքից»: Այնուհետեւ նա ծառ է տնկել այդ պուրակում:

Ավելացնենք, որ Վարդան Գրիգորյանը, նախքան 1997-ին Քառնեգի կորպորացիայում աշխատելը, եղել է նախ Բրաուն համալսարանի պրեզիդենտը, այնուհետեւ՝ նաեւ Նյու Յորքի հանրային գրադարանի տնօրենը: Արժանացել է բազմաթիվ մրցանակների եւ պատվավոր դոկտորի աստիճանի: Գրել եւ հրատարակել է «Դեպի տուն ճանապարհը: Իմ կյանքն ու ժամանակները», «Իսլամը որպես մոզաիկ եւ ոչ թե միաձույլ կառույց եւ արդի Աֆղանստանի առաջացումը, 1880-1946 թթ.» հատորները:

Հ. Ծ.

# Ալեքսանդերը եւ Կլեպերը գլխավոր...

*1-ին էջից*

**«Մենք տեղեկություններ չենք հավաքել ԵՄ բնակիչների վերաբերյալ: Մենք եւ ՆԱՏՕ-ի գծով մեր դաշնակիցները տվյալներ հավաքել ենք մեր երկրները պաշտպանելու եւ մեր ռազմական գործողություններին օժանդակելու համար», հայտարարել է Ալեքսանդերը:**

**Ազգային հետախուզության տնօրեն Ջեյմս Կլեպերը իր հերթին խոստովանել է, որ հետախուզության գլխավոր նպատակը տարբեր մակարդակի ղեկավարների, այդ թվում զինվորական ղեկավարության, մտադրությունների բացահայտումն է:**

**Կլեպերի խոսքերով, իր գործունեության 50 տարվա ընթացքում «ոչինչ չի փոխվել», համենայն դեպս՝ ամերիկացիների համար: Բանից պարզվում է, որ նույնիսկ դաշնակից երկրների նախագահների ու վարչապետների գաղտնալսումները սովորական երեւույթ են:**

**Դուք կարծում եք, որ դաշնակիցները լրտեսական գործունեությամբ են զբաղվում ԱՄՆ-ի, մեր հատուկ ծառայությունների եւ երկրի ղեկավարության դե՞մ,- հարցրել է Ներկայացուցիչների պալատի հետախուզության կոմիտեի ղեկավար Մայք Ռոջերսը:**

**- Միանգամայն ճիշտ է,- պատասխանել է Ջեյմս Կլեպերը, ակնհայտորեն արդարացնելով ԱՄՆ-ի լրտեսական գործունեությունը:**

**Ինչ վերաբերում է նախագահ Բարաք Օբամային, նա շարունակում է պնդել, թե իրեն ոչինչ հայտնի չէ Անգելա Մերկելի եւ եվրոպացի մյուս ղեկավարների հեռախոսների գաղտնալսումների մասին: Այս կապակցությամբ BBC-ն հաղորդում է, որ ԱՄՆ-ում գերագույն գլխավոր հրամանատար Օբամային արդեն սկսել են անվանել «գերագույն անտեղյակ»:**

**Ի դեպ, Օբաման արդեն հրամայել է սահմանափակել գաղտնալսումները ՄԱԿ-ի կենտրոնակայանում, իսկ գեներալ Ալեքսանդերը հայտարարել է, որ երկրի հատուկ ծառայություններում սկսված բարեփոխման շրջանակներում ԱԱԳ-ն աշխատանքի կընդունի «քաղաքացիական իրավունքների եւ մասնավոր կյանքի անձեռնմխելիության մասնագետի»: Սոցիալական ցանցերում նրան կատակով առաջարկել են թափուր տեղի համար քննության առնել ԱԱԳ եւ ԿՀՎ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենի թեկնածությունը:**

Պ. Ք.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Քննարկվեցին պլաստիկ վիրաբուժության հիմնահարցեր

*Միջազգային գիտաժողով Երեւանում*

Պլաստիկ վիրաբուժության եւ էսթետիկ բժշկության արդիական հարցերը պլաստիկ, վերականգնողական եւ էսթետիկ վիրաբույժների Երեւանում կայացած 4-րդ միջազգային գիտաժողովի ուշադրության կենտրոնում էին: Ֆորումի թեման՝ «Տեխնոլոգիական նորարարություններ պլաստիկ վիրաբուժության մեջ», կանխորոշեց մի շարք երկրների ներկայացուցիչների բանավեճի ընթացքը, իսկ Հայաստան էին եկել մասնագետներ 24 պետություններից, այդ թվում՝ Թուրքիայից:

- Գիտաժողովի մասնակիցները ներկայացրին հետաքրքրական մշակումներ ու նորագույն այն տեխնոլոգիաները, որոնք լայնորեն ներդրվում են պլաստիկ վիրաբուժության մեջ, համադրելով այն բժշկության այլ ուղղությունների հետ,- ասաց ֆորումի կազմակերպիչներից Երեւանի «Դա Վինչի» պլաստիկ վիրաբուժության եւ էսթետիկ բժշկության կլինիկայի գլխավոր բժիշկ **Իրինա Մանասարյանը**: - Դա տարբեր պրոֆիլի բժիշկների համատեղ աշխատանք է, որը այցելուին թույլ է տալիս լինել ավելի առողջ, ունենալ ավելի լավ տեսք, զգալ ավելի երիտասարդ:



- Առողջության վիճակն ազդում է արտաքինի վրա, եւ, օրինակ, մաշկը մարդու առողջության, օրգանիզմի վիճակի արտացոլումն է,- հիշեցրեց բժիշկը: - Այդ պատճառով ոչ ճիշտ է այն պնդումը, թե պլաստիկ վիրաբույժների աշխատանքն ուղղված է միայն այցելուի քմահաճույքների կատարմանը եւ արտաքինի ինչ-որ արատներ ուղղելուն: Չէ՞ որ, օրինակ, մի շարք ուռուցքաբանական վիրահատություններից հետո աշխատում են պլաստիկ վիրաբույժները՝ վերականգնելով մաշկի, մարմնի առանձին հատվածների վնասվածքները,- փաստեց Ի. Մանասարյանը:

Հայաստանում ավելի շատ են սկսել ուշադրություն դարձնել արտաքինին, հայտնեց գլխավոր բժիշկը: Նրա խոսքերով՝ դա կապված է այն բանի հետ, որ մարդիկ ձգտում են բարձրացնել կյանքի որակը, որի դրսեւորումներից են էսթետիկությունը, գրավչությունը, ավելի շատ են նրանք, ովքեր միջին դասին են պատկանում եւ հնարավորություն ունեն դիմելու նման վիրահատությունների:

Պակաս կարեւոր չէ, որ պլաստիկ վիրահատությունից հետո առաջանում են բժշկական խիստ երաշխավորություններ, որոնք միանշանակ նպաստում են առողջ ապրելակերպին, եւ որեւէ այցելու դրանք չի անտեսի,- պնդում է Ի. Մանասարյանը:

Գլխավոր բժշկին ուրախացնում է, որ պլաստիկ վիրաբուժության այցելուների թվում Հայաստանում շատացել են տղամարդիկ: Մեր ազգային մտածելակերպը հաշվի առնելով՝ առաջներում դա բնորոշ չէր, իսկ հիմա նաեւ տղամարդիկ են սկսել իրենց հետեւել, ձգտում են գեղեցիկ երեւալ, ասաց նա:

- Երեւանյան կլինիկա են դիմում նաեւ արտերկրից: Այսպես, մի կին Խորվաթիայից եկել էր կուրծքը պատվաստելու՝ իմպլանտացիա անելու,- հայտնեց Ի. Մանասարյանը: - Օտարերկրացիները ստանում են բարձր մասնագիտացված օգնություն, գները մեզ մոտ, եվրոպականի համեմատ, բնականաբար, ավելի ցածր են, եւ նրանք նախընտրում են ստանալ ավելի բարձր որակ ու ավելի մատչելի գին «մեկ փաթեթով»:

Այսօր շատացել են էսթետիկ վիրաբուժության կլինիկաները, շարունակեց հաստատության ղեկավարը: Նրա խոսքերով, ցավոք, շատ հաճախ հանդես է բերվում ոչ արհեստավարժ մոտեցում գործին, մասնագետներ կան, որոնք աշխատում են ոչ պատշաճ պայմաններում, դրանով իսկ վարկաբեկելով էսթետիկ վիրաբուժության գաղափարը: Ի՞նչ պայմաններում են աշխատում, դժվար է հետեւել, շարունակեց տիկին Մանասարյանը: «Մենք մեր հաճախորդներին խորհուրդ ենք տալիս դիմել միայն բարձրորակ, արհեստավարժ մասնագետների: Եթե չեք ուզում ստանալ բարդացումներ, անբավարար արդյունք, դիմեք միայն մասնագետների, որոնք հավաստագրված են, որոնք աշխատում են որակյալ դեղամիջոցներով»,- պնդում է Ի. Մանասարյանը:

Մեր կլինիկան արդեն 3 տարեկան է, շարունակեց գլխավոր բժիշկը: Անընդհատ զարգանում ենք, եթե առաջ մենք ունեինք միայն կոսմետոլոգիայի եւ կոսմետիկ վիրաբուժության բաժանմունք, այժմ նաեւ առաջարկում ենք ռեաբիլիտացիայի ու դիետոլոգիայի ծառայություններ: Մենք առաջարկում ենք ծառայությունների լայն սպեկտր, վիրահատությունները կատարում ենք միայն տեղական անզգայացմամբ, այսինքն՝ մեկ օրվա վիրահատություններ (այցելուն վիրահատվում է ու տուն գնում): Առաջ մենք իրականացնում էինք միայն մազերի, այժմ նաեւ՝ հոնքերի պատվաստում, ընդգծեց բժիշկը:

- Կլինիկան ակտիվ աշխատանք է տանում օտարերկրյա գործընկերների հետ, սկսել ենք համագործակցել մոսկովյան «Նիկե-Մեդ» ընկերության հետ, աշխատում ենք Ռուսաստանի պլաստիկ վիրաբույժների հետ: Մեր մասնագետները մեկնում են արտերկիր ստաժավորման, գիտաժողովների ու խորհրդաժողովների՝ դա անհրաժեշտ է, որպեսզի ժամանակին համաքայլ լինենք, իմանանք համաշխարհային նորույթների, նորահայտ տեխնոլոգիաների մասին, եւ օգտագործենք դրանք մեր աշխատանքում,- համոզված է Ի. Մանասարյանը:

Աշխարհում շատ են հայազգի էսթետիկ վիրաբույժները, ընդգծեց գլխավոր բժիշկը: Նրանցից շատերը ծնվել են Հայաստանում, այժմ աշխատում են Ռուսաստանում, այլ երկրներում, գլխավորում են կլինիկաներ, ինստիտուտներ:

Ինչպես նշեց պլաստիկ վիրաբույժների հայկական ընկերակցության նախագահ **Արմեն Հովհաննիսյանը**, էսթետիկ վիրաբուժությունը, պլաստիկ վերականգնողականի հետ մեկտեղ, Հայաստանում համեմատաբար նոր է, սակայն մրցունակ է: Եթե դիտարկենք տարածաշրջանի կտրվածքով, այսօր Հայաստանը պլաստիկ բժշկության զարգացման առումով առաջատարներից մեկն է, մեր վիրաբույժներն ավելի բարձր կարգի են, քան նախկինում, եւ այսօր մեզանում կատարվում է այդ ոլորտի վիրահատությունների ողջ ընտրանին, փաստեց բժիշկը:

Մենք հրավիրել ենք այս գիտաժողովը, որպեսզի հասկանանք, ինչ նոր բան կա այսօրվա փուլում, հետեւաբար, այդ փորձն ընդօրինակենք, մտքեր փոխանակենք գործընկերների հետ, ասաց Ա. Հովհաննիսյանը:

- Կարեւոր է նաեւ կենսակերպը. մարդիկ ավելի ու ավելի են դիմում մեզ իրենց արտաքինի համար, ելնելով մասնագիտությունից, զբաղմունքից, նրանք ցանկանում են ավելի լավ, երիտասարդ տեսք ունենալ,- նշեց ընկերակցության նախագահը: - Ավելի ու ավելի են դիմում դիետոլոգի. պայքարում են ավելորդ քաշի դեմ, ավելի են դիմում դեմքը բարեձեւ դարձնելու, կնճիռների վերացման հարցով: Ծերացումը գործընթաց է, որը ոչ ոք երբեւէ չի կանգնեցրել, ուստի եւ մարդիկ դիմում են պլաստիկ վիրաբույժի,- հիշեցրեց Ա. Հովհաննիսյանը: -Դրանք իրենց բիզնեսում առաջատար գործարարներ են, լավ բժիշկներ են, այլ մասնագիտությունների տեր մարդիկ, որոնք ձգտում են ունենալ համապատասխան արտաքին, ավելի լավ տեսք:

ՏԻԳՐԱՆ ԼԻԼՈՅԱՆ

**7-ՐԴ ՓԱՌԱՏՈՆ**

# ՎիվաՍել-ՄՏՍ-ը կրկին «Վերադարձի» դասական երաժշտության փառատոնի գլխավոր հովանավորն է



«Արվեստների պատկերասրահ» մշակութային հիմնադրամը ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր հովանավորությամբ ներկայացնում է «Վերադարձի» դասական երաժշտության յոթերորդ փառատոնը:

Արամ Խաչատրյան համերգասրահում մեկնարկել է «Վերադարձի» դասական երաժշտության յոթերորդ փառատոնը: Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատոր ՎիվաՍել-ՄՏՍ-ի շարունակական հոգածության եւ աջակցության շնորհիվ, արդեն ավանդական դարձած փառատոնն այս տարի եւս մայրաքաղաքի հանդիսատեսին հնարավորություն կընձեռի հանդիպելու արտերկրում ապրող եւ ստեղծագործող տաղանդաշատ մեր հայրենակիցներին, ունկնդրելու դասական երաժշտության գլուխգործոցներ:

«Ժամանակակից աշխարհում արվեստը սահմաններ չի ճանաչում: Մշակութային հարուստ ժառանգություն ունեցող երկրի արվեստագետները կարող են ինքնադրսեւորվել ու ստեղծագործել թե՛ հայրենիքում, եւ թե՛ արտերկրում: Վերջին տասնամյակներում դասական երաժշտարվեստի ականավոր ներկայացուցիչներից շատերը մեկնել են Հայաստանից՝ առավել կատարելագործվելու եւ համաշխարհային բարձունքներ նվաճելու համար: Անշուշտ, մենք՝ հայերս, հպարտություն ենք ապրում տեսնելով, թե ինչպես են մեր հայրենակիցներն իրենց արժանի տեղը գտնում միջազգային ասպարեզում: Միաժամանակ, պետք է հիշել, որ խոստումնալից երիտասարդ կատարողների բացահայտումը, նրանց հետագա զարգացումն ու սերնդափոխությունը ենթադրում են շարունակական կապի առկայություն եւ փորձի փոխանցում: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի դասական երաժշտության հայազգի կատարողներն ու ստեղծագործողները հնարավորինս հաճախակի հանդես գան հայրենիքում»,- նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

Համերգային ծրագիրը, որը նվիրված է Հայաստանի պետական կամերային նվագախմբի հիմնադիր, ականավոր երաժիշտ Զարեհ Սահակյանցի 80-ամյակին, ներկայացրել են տաղանդաշատ երաժիշտներ Դավիթ Հարությունյանը (ջութակ, Ֆրանսիա), Տոնկո Ակասական (ալտ, ճապոնիա), Միքայել Հախնազարյանը (թավջութակ, Գերմանիա), Մերի Մովսիսյանը (սոպրանո), ինչպես նաեւ Հայաստանի պետական կամերային նվագախումբը՝ գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր Վահան Մարտիրոսյանի ղեկավարությամբ:

Ծրագրում ընդգրկված էին Զ. Սահակյանցի փոխադրումները՝ Ձայնի եւ կամերային նվագախմբի համար, Վ.Ա. Մոցարտի, Տ. Վիտալիի, Մ. Ռավելի, Է. Բլոխի, Կ. Ատտերբերգի ստեղծագործությունները:

Փառատոնը հանդիսատեսին կներկայանա 6 համերգից բաղկացած համերգաշարով եւ իր աշխատանքը կեզրափակի նոյեմբերի 20-ին:

# Զանգ Ռուսաստան՝ 1 րոպեն ընդամենը 15 դրամով

Մինչեւ 2014 թ. հունվարի 31-ը ՎիվաՍել-ՄՏՍ-ի «Բարբառ» սակագնային պլանի բաժանորդները կարող են «Հեռազանգ» ծառայության միջոցով զանգահարել Ռուսաստանի քաղաքային ցանցերի բաժանորդներին 15 դրամ/րոպե, իսկ ՄՏՍ-Ռուսաստանի բջջային հեռախոսահամարներին՝ ընդամենը 25 դրամ/րոպե սակագներով:

Ի դեպ, «Բարբառ» կանխավճարային սակագնային պլանի բաժանորդներն այժմ երկուշաբթիից ուրբաթ օրերին Երեւանի տարածքում գտնվելիս թե՛ սակագնային պլանի ներսում, եւ թե՛ ՎիվաՍել-ՄՏՍ-ի մյուս բաժանորդներին կարող են զանգահարել ընդամենը 37 դրամ/րոպե սակագնով, նախկին 77-ի փոխարեն:

# Չարտոնված սարքերի միջոցով միջամտություն ՎիվաՍել-ՄՏՍ-ի հաճախականություններին Երեւանի կենտրոնական հատվածներում

ՎիվաՍել-ՄՏՍ-ը տեղեկացնում է, որ երրորդ անձանց կողմից չարտոնված սարքերի միջոցով ՎիվաՍել-ՄՏՍ-ի հաճախականություններին վերջերս բացահայտված միջամտության հետեւանքով, ընկերության բաժանորդները Երեւանի կենտրոնական հատվածներում կարող են ունենալ որոշակի խնդիրներ՝ կապված շարժական հեռախոսակապի ձայնային եւ տվյալների փոխանցման ծառայությունների հասանելիության հետ:

Ընկերությունը քայլեր է ձեռնարկում խնդիրը լուծելու ուղղությամբ:

# Մեկնարկեց «ArmNet 2013» նախագիծը

Մեկնարկեց «ArmNet Awards 2013» համահայկական ինտերնետային մրցույթը եւ «ArmNet 2013» միջոցառումների շարքը, որի մասին երեկ Երեւանում կայացած ասուլիսի ժամանակ հայտարարեցին ArmNet-ի կազմակերպիչներ Maeutica բրենդինգային ընկերությունը, Orange Արմենիա եւ ISOC AM («Ինտերնետ Հանրություն» ՀԿ) կազմակերպությունները:



«Armnet 2013»-ը կոչված է գնահատելու տեխնոլոգիաների հանրայնացման հետ մեկտեղ՝ ինտերնետի հայկական սեգմենտում կատարված առաջընթացը, խրախուսելու հայկական կայքերի բովանդակային զարգացումը եւ նպաստելու նոր ընկերությունների ստեղծմանը:

«ArmNet 2013» նախագիծը ներկայացնում է երեք միջոցառումների շարք՝ ուղղված տեղեկատվական տեխնոլոգիաների, մասնավորապես բջջային տեխնոլոգիաների զարգացմանը ՀՀ-ում:

Նախագծի միջոցառումներից առաջինը «ArmNet Awards 2013» հայկական ինտերնետ-կայքերի մրցույթն է, որի նպատակն է բացահայտել եւ պարգեւատրել լավագույն հայկական ինտերնետային կայքերը:

Մրցույթի արդյունքում մրցանակներ կտրվեն լավագույն կայքերին եւ բջջային հավելվածներին 8 անվանակարգերում.

«ArmNet 2013» մրցույթին մասնակցելու համար կայքերի գրանցումը կմեկնարկի նոյեմբերի 1-ին, ժամը 18:00-ին, www.armnetawards.am կայքում: Ժյուրիի անդամները կուսումնասիրեն եւ կգնահատեն բոլոր առաջադրված կայքերը եւ մրցույթի ավարտից մեկ շաբաթ առաջ՝ նոյեմբերի 25-ին, կընտրեն յուրաքանչյուր անվանակարգում հաղթանակի հավակնորդ կայքերը կամ բջջային հավելվածները: Մրցույթի երկրորդ փուլի ընթացքում ժյուրին կընտրի յուրաքանչյուր անվանակարգի հաղթող կայքը եւ մրցույթի գլխավոր մրցանակակրին:

Ժյուրիի ընտրությանը զուգահեռ կանցկացվի SMS քվեարկություն, որն իրականացվում եւ ապահովվում է Nikita Mobile ընկերության կողմից:

Բոլոր այցելուները SMS հաղորդագրության միջոցով կկարողանան քվեարկել իրենց նախընտրած կայքի համար:

Մրցույթի արդյունքները կամփոփվեն նոյեմբերի 30-ին կայանալիք մրցանակաբաշխության ժամանակ:

Մրցույթին գրանցման եւ մասնակցության մասին բոլոր մանրամասները կարելի է գտնել ArmNet 2013-ի պաշտոնական կայքում՝ www.armnetawards.am

«Մենք պլանավորում ենք ArmNet նախագիծը դարձնել ավելի արդյունավետ միջոցառում մասնակիցների համարոչ միայն համաշխարհային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ բիզնես կապեր հիմնելու, այլեւ իրենց ստարտապները իրական բիզնեսի վերածելու գործում հիմնարար գիտելիքներ ձեռք բերելու համար: Շատ հաճախ հանճարեղ բիզնես գաղափարները չեն գտնում իրենց առաջին ներդրումը: Այդ պատճառով է, որ մենք ուրախ եւ հպարտ ենք, որ նախագծի շրջանակներում ՍԿՈԼԿՈՎՈ Ստարտապ Ակադեմիայի բանախոսները կկիսվեն մասնակիցների հետ իրենց գիտելիքներով եւ փորձով համաշխարհային ստարտապ էկոհամակարգի էության վերաբերյալ «Startup Day» միջոցառման ընթացքում»,- նշեց Maeutica բրենդինգային ընկերության տնօրեն **Հայկուհի Տաքսիլդարյանը** այսօր կայացած մամլո ասուլիսի ժամանակ:

«Ինտերնետ օգտվողների զգալի մասի մոտ Ինտերնետ հասկացությունը համարժեք է վեբ կայքերին եւ սոցիալական ցանցերին, իսկ վեբ կայքերը ամեն տարի զարգանում են, առաջարկում Ինտերնետի ամենաառաջավոր լուծումներին միանալու հնարավորություններ: Մեր կյանքը գրեթե անհնար է պատկերացնել առանց կայքերի ամենօրյա այցելության, շատերը մոռացել են թերթերի մասին, անգամ հեռուստատեսությունը չի դիմանում վեբ կայքերի մրցակցությանը: Մեր երկրում ձեւավորվում են երիտասարդ վեբ-ծրագրավորողների, դիզայներների, լուսանկարիչների միավորող ընկերություններ, որոնք, մեր համոզմամբ, ի վիճակի են մրցակցել միջազգային շուկաներում: Ինտերնետ Հանրություն ՀԿ-ի մասնակցությունը այս միջոցառմանը պարզապես անխուսափելի է եւ միաժամանակ պատվավոր, հաջողություն եմ ցանկանում մրցույթի բոլոր մասնակիցներին, անկախ նրանից, կարժանանան մրցանակի թե ոչ»,- ասաց Ինտերնետ Հանրություն ՀԿ-ի ներկայացուցիչ **Գրիգոր Սաղյանը**:

«Ուրախ ենք արդեն չորրորդ անգամ աջակցել ArmNet նախագծին, որն իսկապես դարձել է այն վայրը, որտեղ ավանդաբար ամփոփվում է ինտերնետային զարգացումների հայկական տարին եւ որտեղ կարելի է հանդիպել ու հետաքրքրական մտքեր փոխանակել: Orange-ը կարեւոր դերակատարություն ունի Հայաստանում բջջային կապի շուկայում ու շարժական ինտերնետի առաջատարն է, եւ մենք ուրախ ենք այս կերպով աջակցել հայկական վեբ բովանդակության զարգացմանն ու խթանմանը: Մեր գործընկերներ Maeutica բրենդինգային ընկերության եւ Ինտերնետ Հանրություն ՀԿ-ի հետ համատեղ սիրով հայտարարում ենք չորրորդ ArmNet-ի մեկնարկը»,- ասաց Orange Արմենիա ընկերության մարկետինգի տնօրեն **Արամ Մկրտչյանը**:

ArmNet 2013-ը նաեւ ներառում է ինտերնետին եւ բարձր տեխնոլոգիաներին նվիրված կոնֆերանս, որը տեղի կունենա նոյեմբերի 30-ին: Կոնֆերանսի խորագիրն է «Համընդհանուր մոբիլիզացում. բջջային տեխնոլոգիաները ամենօրյա կյանքում»: ArmNet 2013 կոնֆերանսի շրջանակներում ելույթ կունենան ՏՏ ոլորտի այնպիսի ականավոր միջազգային մասնագետներ, ինչպիսիք են ՍԿՈԼԿՈՎՈ Ստարտափ Ակադեմիայի տնօրեն Լորենս Ռայթը, Fowler International ընկերության տնօրեն եւ ՍԿՈԼԿՈՎՈ Ստարտափ Ակադեմիայի պրոֆեսոր Գարի Ֆաուլերը, Drimmi ընկերության հիմնադիր եւ տնօրեն Նիկիտա Շերմանը, Workle.ru ընկերության տեխնիկական տնօրեն Սերգեյ Պոնոմարենկոն եւ այլք:

Առաջին անգամ Հայաստանում ArmNet նախագծի շրջանակներում կանցկացվի «Startup Day» միջոցառումը: Միջոցառման շրջանակներում ՍԿՈԼԿՈՎՈ Ստարտափ Ակադեմիայի փորձագետներ Լորենս Ռայթը (ՍԿՈԼԿՈՎՈ Ստարտափ Ակադեմիայի տնօրեն) եւ Գարի Ֆաուլերը (Fowler International ընկերության տնօրեն, ՍԿՈԼԿՈՎՈ Ստարտափ Ակադեմիայի պրոֆեսոր) կվարեն սեմինարներ եւ կկազմակերպեն «Startup Day» մրցույթը, որտեղ հաղթող ճանաչված ստարտափ ընկերությունը կստանա հատուկ մրցանակ միջոցառման կազմակերպիչների կողմից:

Մրցույթի, կոնֆերանսի եւ «Startup Day» միջոցառման ընթացակարգին ծանոթանալու, ինչպես նաեւ մասնակցության համար այցելեք «ArmNet 2012»-ի պաշտոնական կայք՝ http://www.armnetawards.am/

# ՀՀ. պաշտոնյաները՝ բյուրավոր, երկրի պարտքը՝ միլիարդավոր

*1-ին էջից*

Ասենք, ՀՀ գյուղնախարարն ու տեղակալը խոսում են ծիրանի աննախադեպ արտահանումից, խաղողի մթերման անխափան կազմակերպումից, մի այլ նախարար՝ փոքր ու միջին գործարարության հանդեպ ուշադրությունից, իսկ ՀՀ շարքային քաղաքացին, պատմական այս իրողությունները չնկատելու տալով, խոսում է անվերջ թանկացումների ու արտագաղթի մասին: Կարծես կարեւորը արտահանումն է, ցուցահանդեսների մասնակցությունը, արտադրողների շահերն սպասարկելը: Իսկ ՀՀ քաղաքացին թող սպասի, բավարարվի ներմուծվողով, հետն էլ մատչելի թռչնի ու խոզի մսով, կաթի փոշուց ստացվող կաթնամթերքներով, չինական ու թուրքական անորակ ու էժանագին արտադրանքով: Ոչինչ, որ հայ գյուղաբնակը իր կառավարիչների այսօրինակ պահվածքից ու բնության հանդեպ երբեմն անզորությունից աղքատի կարգավիճակում է հայտնվում, տուն-տեղը թողնում, արտերկրներ է մեկնում, ժամանակ անց էլ հարազատ-բարեկամներին է իր մոտ հասցնում, գյուղական համայնքներ են դատարկվում. «չկա մարդը, չկա խնդիրը» մոտեցման մերօրյա հեղինակներին պարզից էլ պարզ է, որ արած-չարածի համար պատասխան պահանջող չկա, ավելին՝ նրանց աննախադեպ խրախուսում է նախատեսվում, աշխատավարձերի կայուն բարձրացման նոր համակարգ է սահմանվում:

Ումից ինչ պահանջի մերօրյա բարձրագույն պաշտոնյան, ասենք, նախարարը: Ինչպես իր կուսակից տեղակալներից կամ կոալիցիոն գործընկեր ենթականերից, որոնք նաեւ բուհերում աշխատանքը համատեղողներ են, ոմանք էլ իրենց սպասարկող ձեռներեցներ, աշխատանքային պարտականությունների կատարում պահանջի: Չէ, անգամ այս մասին մտածել չարժե, քանզի նրանք... այո, թե՛ շատ են, թե՛ հզոր, թե՛ անխոցելի:

Թերահավատներին փորձեմ ներկայացնել ՀՀ նախարարություններից մեկի, ասենք գյուղնախարարության կառուցվածքը, որից մյուսները ոչնչով չեն տարբերվում:

Կառույցը գլխավորում է նախարարը, որը 4 կամ 5 ոլորտային տեղակալներ ունի: Նրանք իրենց հերթին ղեկավարում են մեկ տասնյակի հասնող վարչությունների գործունեությունը, ուր կան առավել նեղ մասնագիտական բաժիններ ու ենթաբաժիններ, տարբեր աստիճանների, որակավորման ու նշանակության պաշտոնյաներ: Կենտրոնական այս կառույցը, իր սպասարկող ու օժանդակող անձնակազմերով ղեկավարում է ՀՀ անտառային տնտեսության, սննդի անվտանգության, գիտակրթական հաստատությունների, պետական ոչ առեւտրային գիտագործառնական ինստիտուտների ու փորձակայանների, գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոնի եւ կառույցի մասնաճյուղեր հանդիսացող գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների, հարյուրավոր անասնաբույժների, այլ տեսչությունների ու գերատեսչությունների, ՀՀ պետբյուջեից ֆինանսավորվող այլ կազմակերպությունների ամենօրյա եւ հեռանկարային գործունեությունը:

Հեռանկարայիններից ամենակարեւորը թերեւս մինչեւ 2015 թ. ընկած ժամանակահատվածում ՀՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարական փաստաթուղթն է: Ըստ նախարարության՝ 2013-ին հացահատիկի համախառն բերքը պետք է կազմեր մոտ 500 հազար տոննա, կեսն էլ չունենք, խոզերի ու ոչխարների գլխաքանակը՝ համապատասխանաբար 200 հազար եւ 1,2 մլն գլուխ, կեսն էլ չկա, թռչուններ՝ 8 մլն, կեսը հազիվ կա, պարզ չէ հաշվառված ճագարների ու ավանակների իրական թիվը: Փոխարենը հայտնի է, որ ՀՀ պետական ագրարային համալսարանը յուրաքանչյուր տարի պատրաստում է բարձր որակավորման 1500 մասնագետներ 34 մասնագիտությունների գծով: ՀՀ գյուղնախի մարզերում գործող 10 պետական քոլեջների առկա եւ հեռակա ուսծրագրերում 3500 սովորողներ կան: Գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնները յուրաքանչյուր տարի իրականացնում են տասնյակհազարավոր խորհրդատվություններ, հազարավոր խորհրդակցություններ ու մարկետինգային միջնորդություններ, լրատվածառայությունները թողարկում են հեռուստահաղորդումներ, տպագրում թերթեր ու ամսագրեր, գյուղաբնակին օգնող ու աջակցող ուղեցույցներ: Հայ հողագործն այս ամենը մի կողմ թողնում ու այլ ուղեցույցներ է ընտրում, ուր յոթնոտարից ակնկալվող աջակցությունները պակաս անորոշ չեն, քան հայրենակից պատասխանատուների անտեսանելի օգնությունները: Առայժմ տարիները հաստատում են, որ պակաս անորոշն անտեսանելիից գերադասելի է:

Այսպես էլ ապրում ենք:

**Հ.Գ.** պաշտոնյաների այս բանակը մեզանում օրերս անտեսվեց, եւ ՀՀ-ում անասնագլխաքանակի հաշվառում իրականացնելու նպատակով արտերկրից 1 մլն դոլարի օգնություն աղերսվեց:

ԳԵՂԱՄ ՔՅՈՒՐՈՒՄՅԱՆ

# Այ քեզ «հարուստ» Ադրբեջան

Մինչ Բաքվում իշխող վարչախումբը եւ նրա խոհանոցից սնվող՝ զանազան «անկախ» փորձագետներ, վերլուծաբաններ եւ առանձին երկրների երկրորդական-երրորդական նշանակության քաղաքական գործիչներ տարփողում են, որ Ադրբեջանը «Հարավային Կովկասի տնտեսական լոկոմոտիվն է», «Իլհամ Ալիեւը կարող է հպարտությամբ հիշեցնել 10 տարիների ձեռքբերումները» եւ այլն, «Թուրան» գործակալությունը տարածել է 2014թ. Ադրբեջանի պետական բյուջեի մասին տնտեսագետ Ռովշան Աղաեւի դիտարկումները:

Վերլուծականի հեղինակը կանխատեսել է, որ 2014-ին Ադրբեջանի կառավարությունը շուրջ 35 տոկոսով կբարձրացնի էներգակիրների եւ կոմունալ ծառայությունների սակագները: Հաշվարկի համար տնտեսագետը հիմք է ընդունել բյուջեում գալիք տարի պետական հաստատությունների էներգակիրների եւ կոմունալ ծախսերի համար հատկացվելիք գումարների կտրուկ ավելացումը:

Այսպես, բյուջետային կազմակերպությունների ջեռուցման, ջրամատակարարման- ջրահեռացման եւ հեռահաղորդակցության ծախսերը 2014-ին կկազմեն 641 մլն. մանաթ այն դեպքում, երբ ընթացիկ տարում նույն նպատակով պետական հատկացումներն ընդամենը 346,8 մլն. են: Փորձագետը գտնում է, որ ծախսերի նման աճը «ոչ մի կերպ չի կարող կապված լինել ծառայությունների ծավալների կտրուկ մեծացման հետ»:

Աղաեւի կարծիքով, «կառավարությունը մտադիր է նավթային եկամուտների նվազումը փոխհատուցել սղաճի հաշվին, բավական է ասել, որ ավելացված արժեքի հարկից մուտքերը նախատեսված են 300 մլն. մանաթի չափով»: Բյուջետային հաստատությունների կողմից վառելիքաքսայուղային նյութերի ձեռքբերման ծախսերը 2014-ին կավելանան 39,5, էլեկտրաէներգիայի համար՝ 25,5, բնական գազինը՝ 18,9 , ջրինը՝ 26,7 տոկոսով: Հեռահաղորդակցության ծախսերը կաճեն 13-32 տոկոսով:

Այդ թվերի վերլուծությունը տնտեսագետ Աղաեւին բերել է համոզման, որ «կառավարությունը կանխատեսում է բազային բարձր սղաճ»: Ըստ այդմ, 2014թ.-ին Ադրբեջանի պետական համախառն եկամուտները նախատեսված են 18 մլրդ 384 մլն, ծախսերը՝ 20 մլրդ մանաթ: Տոկոսային արտահայտությամբ՝ բյուջեի եկամուտները 4 տոկոսով պակաս են, քան՝ ընթացիկ տարում, իսկ ծախսերը՝ 5,3 տոկոսով ավելի:

Նման պատկերը տնտեսագետ Աղաեւին թույլ է տվել եզրահանգել, որ Ադրբեջանի «կառավարությունը 2014թ.-ին կբարձրացնի էներգակիրների եւ կոմունալ ծառայությունների սակագները»: Տնտեսագիտական խոր գիտելիքներ պետք չեն, որպեսզի փորձագետի գնահատականը համարվի արդարացի: Իրոք, եթե Ադրբեջանի կառավարությունը բյուջետային կազմակերպությունների համար էներգակիրների սպառման եւ կոմունալ ծառայությունների դիմաց վճարումների համար 2014թ.-ի բյուջեում գրեթե կրկնակի չափով ավելի գումար է նախատեսել, քան ընթացիկ տարվա նույն բնագավառի ծախսերն են, իսկ պետական կառավարման համակարգում փոփոխություններ չեն կատարվելու, այն է՝ նոր գերատեսչություններ, տարածքային եւ տեղական կառավարման մարմիններ, կրթամշակութային հաստատություններ չեն ստեղծվելու (հակառակ դեպքում հին- «նոր» կառավարություն նշանակելիս Իլհամ Ալիեւը կիրամանագրեր), ապա մնում է եզրահանգել, որ, իրոք, 2014-ին Բաքվում իշխող վարչախումբը բավական թանկ «նվեր» կմատուցի շարքային ադրբեջանցուն:

Տնտեսագետ Աղաեւի հաշվարկով՝ միջին վիճակագրական ընտանիքն Ադրբեջանում 2014-ին շուրջ 55 տոկոսով ավելի կվճարի գազի, էլեկտրաէներգիայի, ջրամատակարարման-ջրահեռացման եւ հեռահաղորդակցության համար: Իլհամ Ալիեւի նախընտրական ծրագրում, մինչդեռ, նախատեսված է մոտակա 5 տարիներին բյուջետային համակարգի աշխատողների աշխատավարձերի առավելագույնը 20-30 տոկոսի աճ: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ միջին- վիճակագրական քաղաքացու կենսամակարդակը ոչ միայն չի բարելավվի, այլեւ, ընդհակառակը, գրեթե կիսով չափ կվատթարանա:

Հավելենք, որ Ադրբեջանում բյուջետային համակարգի առավելագույն աշխատավարձը 2014-ին նախատեսվում է հասցնել 200 մանաթի, իսկ միջին կենսաթոշակը կազմում է շուրջ 100 մանաթ: Եվ եթե կյանքը 2014-ին պաշտոնական տվյալներով կթանկանա 50 տոկոսով, իսկ աշխատավարձերն ու թոշակները կաճեն ոչ ավելի, քան 25 տոկոսով, ուրեմն որեւէ հիմնավորում չկա պնդելու, թե «վերջին 10 տարիներին Ադրբեջանում տնտեսական հրաշք է եղել» կամ այդ երկիրը «Հարավային Կովկասի զարգացման լոկոմոտիվն է»:

Գուցե իրոք նավթի եւ գազի արտահանումից միլիարդավոր դոլարների եկամուտ ստացվում է, բայց դրանից Ադրբեջանի միլիոնավոր քաղաքացիներ ոչ մի օգուտ չեն ունենում: Փոխարենը հղփանում է պետական բյուրոկրատիան եւ օլիգարխիան, որոնք, ձեռք-ձեռքի տված, արտերկրում աստղաբաշխական գումարներ են ծախսում՝ վարձահրավիրելու զանզան տրամաչափի «գործիչների» եւ էլ ավելի ուռճացնելու Հարավային Կովկասի «տնտեսական հրաշքի» առասպելը:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Իսրայելն Արեւելյան Երուսաղեմում կկառուցի 1500 նոր տուն

Իսրայելի իշխանությունները համաձայնեցրել են Արեւելյան Երուսաղեմում 1500 նոր տուն կառուցելու ծրագիրը: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը, վկայակոչելով Իսրայելի բանակային ռադիոյի տվյալները:

Վարչապետ Բենիամին Նաթանյահուն եւ ներքգործնախարար Գեդեոն Սաարը հավանություն են տվել Արեւելյան Երուսաղեմի Ռամաթ-Շլոմո հրեական ավանում նոր տների կառուցման ծրագրին:

Նոր շինարարություն սկսելու վերաբերյալ հայտարարությունն արվել է այն բանից մի քանի ժամ հետո, երբ Իսրայելում ազատ են արձակվել 26 պաղեստինցի կալանավորներ:

Իսրայելական բանտերից պաղեստինցի կալանավորների արձակումը համաձայնեցված էր պաղեստինա-իսրայելական հակամարտության կարգավորման միջոցառումների շրջանակներում: Նախատեսված է 4 խմբերով ազատ արձակել ընդհանուր առմամբ 104 պաղեստինցիների: 26 հոգանոց առաջին խումբն ազատ էր արձակվել օգոստոսին:



Պաղեստինա-իսրայելական բանակցությունները երեք տարվա ընդմիջումից հետո ԱՄՆ-ի միջնորդությամբ վերսկսվեցին 2013-ի հուլիսին: Դրանց ֆոնի վրա օգոստոսին Իսրայելի իշխանությունները հավանություն տվեցին վիճելի տարածքներում, այսպես կոչված «կանաչ գծից» դուրս մոտ 2500 նոր տների շինարարության ծրագրին: Այդ որոշումն արժանացավ պաղեստինյան վարչակազմի քննադատությանը, որը հայտարարեց, թե նման քայլերը կարող են խոչընդոտել բանակցությունների ընթացքին:

ՄԱԿ-ը Այսրհորդանանում հրեական բնակավայրերով զբաղեցված տարածքները համարում է Իսրայելի օկուպացված տարածքներ: Այն նոր շենքերի կառուցումը քանիցս հարուցել է միջազգային ընկերակցության քննադատությունը:

ՌԱՍ ՈՒԼ ԱՅՆ

# Սիրիայում ապստամբները քրդերի դեմ քիմիական զենք են կիրառել

*Սպանվել է եւս մեկ լրագրող*

Սիրիայի հյուսիս-արեւելքում ապստամբները ըստ երեւույթին թունանյութերի արկ են օգտագործել աշխարհազորի դեմ մղվող մարտերում: Այդ մասին հաղորդում է լիբանանյան «Ալ Մայադին» հեռուստաալիքը:



Վերջինիս քրդական աղբյուրի տվյալներով՝ միջադեպը տեղի է ունեցել հոկտեմբերի 29-ին, սիրիա-թուրքական սահմանի մոտ գտնվող՝ Հայոց ցեղասպանության գողգոթաներից Ռաս ուլ Այն քաղաքի մերձակայքում: Արկի պայթյունից հետո դեղին ծուխ է բարձրացել, իսկ մի շարք աշխարհազորայիններ ունեցել են քիմիական զենքից տուժածներին բնորոշ սրտխառնոցներ ու փսխումներ:

ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը նշում է, որ վերջին երեք օրերին Ռաս ալ Այնում քրդերը մարտեր են մղում «Ան Նուսրա ճակատ» եւ «Իրաքի ու Լեւանտի իսլամական պետություն» խմբավորումների արմատական իսլամիստների դեմ:

Սիրիայի բնակչության մոտավորապես 10 տոկոսը կազմող քրդերը համահավաք ապրում են երկրի հյուսիս-արեւելքում: Նախագահ Բաշար Ասադի վարչակարգի եւ ընդդիմության միջեւ 2011 թ. հակամարտության ծագումից հետո նրանք հայտարարեցին, որ չեն պաշտպանելու կողմերից որեւէ մեկին: Քրդերի բնակության տարածքում ստեղծվել է աշխարհազոր, որը կոչված է նրանց պաշտպանելու ինչպես ապստամբներից, այնպես էլ կառավարական զորքերից:

«Ալ Արաբիա» հեռուստաալիքը հոկտեմբերի 30-ին հաղորդեց, որ Հալեպի նահանգում սպանվել է իր թղթակից Մուհամմեդ Սաիդը: Հալեպում ծնված Սաիդը տարբեր լրատվամիջոցների համար պատրաստում էր լրատվական թողարկումներ եւ տեսանյութեր Սիրիայի քաղաքացիական պատերազմի վերաբերյալ:

Լրագրողների պաշտպանության կոմիտեի տվյալներով, 2011-ին սկսված քաղաքացիական պատերազմի տարիներին Սիրիան դարձել է լրագրողների համար ամենավտանգավոր երկիրը: Թղթակիցների վրա հարձակումներ են կատարում ինչպես ապստամբները, այնպես էլ կառավարական զորքերը: Միայն 2012 թվականին այստեղ սպանվել են 39 եւ առեւանգվել 21 լրագրողներ:

Պ. Ք.

# Երկաթուղային թունել Բոսֆորի նեղուցի տակ

Ստամբուլում տեղի է ունեցել Բոսֆորի նեղուցի տակ կառուցված երկաթուղային թունելի բացումը: Թուրքիայի իշխանությունները դրա շինարարությունն արդեն անվանում են «դարի նախագիծ»: Վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը բացման արարողության ժամանակ ասել է, որ «Մարմարայ» թունելը «150 տարի երազանք լինելուց հետո վերջապես իրողություն է դարձել»:

Ինտերֆաքս գործակալությունը նշում է, որ թունել կառուցելու գաղափարը 19-րդ դարում առաջին անգամ արտահայտել է Օսմանյան կայսրության սուլթան Աբդուլ-Մեջիդը: PK հեռուստաալիքի տվյալներով, Ստամբուլի ասիական ու եվրոպական մասերը միացնող երկաթուղային թունելի երկարությունը 13,6 կիլոմետր է:

Ակնկալվում է, որ նոր երկաթգիծը կնպաստի Արեւմտյան Եվրոպայի հետ Ասիայի, մասնավորապես Չինաստանի առեւտրի զարգացմանը, ինչպես նաեւ կթուլացնի Բոսֆորի երկու կամուրջների բեռնվածությունը:

Երկաթուղային թունելի շինարարությունն սկսվել էր 2004-ին, բայց ձգձգվել էր հնագիտական պեղումների անհրաժեշտության պատճառով: Շինարարական աշխատանքների արժեքը 4,1 մլրդ դոլար է: Շինարարը հատկապես այդ նպատակով ստեղծված ճապոնա-թուրքական կոնսորցիումն է: Ֆինանսավորել են Միջազգային համագործակցության ճապոնական բանկը եւ Եվրոպայի ներդրումային բանկը:

Երեկ տեխնիկական խափանման հետեւանքով մի քանի ժամով դադարեցվեց թունելում գնացքների երթեւեկը:

ԲՈՒԽԱՐԵՍՏ

# Ռումինահայ մշակութային ժառանգությանը նվիրված միջազգային գիտաժողով

Հոկտեմբերի 30-ին Բուխարեստում՝ Ռումինիայի Ազգային գրադարանի Մեծ սրահում, բացվեց ռումինահայ մշակութային ժառանգությանը նվիրված միջազգային գիտաժողովը, որին երկու տասնյակից ավելի ռումինացի ու հայ գիտնականների կողքին մասնակցում են Ֆրանսիայից, Գերմանիայից, Հունգարիայից, Մոլդովայից եւ Ուկրաինայից ժամանած հետազոտողներ: Գիտաժողովն անցկացվում է ռումինահայ մշակութային հարուստ ժառանգությանը նվիրված ծրագրի շրջանակներում, Հայաստանի եւ Ռումինիայի մշակույթի նախարարությունների, Հայաստանի դեսպանության եւ Ռումինական ակադեմիայի համատեղ ջանքերով, Ռումինիայի Հայոց միության եւ Ռումինահայոց թեմի աջակցությամբ:




Գիտաժողովը հանդիսավորապես բացեցին Ռումինիայի մշակույթի նախարար Դանիել Բարբուն եւ Հայաստանի դեսպան Համլետ Գասպարյանը: Ողջույնի խոսքերով հանդես եկան Ռումինիայի կառավարության եւ ԱԳՆ բարձրաստիճան պաշտոնյաներ, Ռումինիայի Հայոց թեմի առաջնորդ Տաթեւ Եպիսկոպոս Հակոբյանը եւ Ռումինիայի Հայոց միության նախագահ Վարուժան Ոսկանյանը:

,Ռումինիան եվրոպական տարածքի վրա, եւ ոչ միայն, հայերի բազմադարյա ներկայության, հայկական մշակութային ժառանգության բացառիկ հարուստ վայրերից է: Դարեր ի վեր հայերն անջնջելի հետք են թողել ռումինական տարածքների վրա, նպաստել այս երկրի ձեւավորմանը եւ զարգացմանը, տվել փայլուն դեմքեր ռումինական կյանքի բոլոր բնագավառներում: Այս մասին շատ է գրվել եւ խոսվել: Այսօր էլ այս նյութը հանրային հետաքրքրության առարկա է թե հասարակության լայն շերտերի, բավական է միայն հետեւել մամուլին եւ հայկական իրադարձությունների ցանկին, թե գիտական-հետազոտական շրջանակների մոտ: Դրա մասին են վկայում ժամանակակից ռումինացի եւ այլ հեղինակների հարյուրավոր ուսումնասիրությունները եւ հրատարակությունները, - իր խոսքի մեջ ասաց դեսպան Գասպարյանը:

Դեսպանը տեղեկացրեց, որ վերջին երկու տասնամյակի ընթացքում երկու պետությունների միջեւ քայլեր են արվել այդ ժառանգության պահպանման, ուսումնասիրման եւ զարգացման ուղղությամբ, ստեղծվել է իրավական լուրջ հիմք՝ ստորագրվել են ոլորտը կարգավորող միջպետական մի շարք համաձայնագրեր, որոնց շարքում 2011թ. սեպտեմբերին Բուխարեստում ստորագրված մշակույթի, կրթության եւ գիտության բնագավառում համագործակցության հնգամյա ծրագիրը: Համագործակցության համաձայնագրեր են ստորագրվել նաեւ գիտական եւ կրթական հաստատությունների միջեւ, օրինակ, Ռումինիայի եւ Հայաստանի գիտությունների ակադեմիաների, Բուխարեստի եւ Երեւանի համալսարանների միջեւ, նման մի համաձայնագիր պատրաստվում է Ազգային արխիվների միջեւ:

Գիտաժողովի զեկուցումներն ընդգրկում են ռումինահայոց պատմության, հոգեւոր եւ մշակութային ժառանգության հարցեր, որոնց վերաբերյալ հաղորդումներով հանդես եկան Ռումինական ակադեմիայի անդամներ, Հայաստանի ԳԱԱ պատմության եւ գրականության ինստիտուտների, Հայաստանի Ազգային գրադարանի, Երեւանի Մատենադարանի, Բուխարեստի, Յաշի, Կլուժի, Գալացի մի շարք ակադեմիաների եւ համալսարանների, Լվովի եւ Կրամատորսկի (Ուկրաինա), Լայպցիգի (Գերմանիա) եւ Ֆրանսիայի գիտահետազոտական հիմնարկների հեղինակավոր գիտաշխատողներ եւ հայագետներ:

Երկօրյա բուխարեստյան նիստերից հետո գիտաժողովի մասնակիցները կուղեւորվեն Սուչավա, ուր դեռեւս 1401թ. հաստատվել է Հայոց եպիսկոպոսական աթոռը, եւ մինչեւ այսօր գործում են հայկական Հաճկատար եւ Զամկա նշանավոր վանքերն ու երեք եկեղեցիներ, ինչպես նաեւ Յաշ, Բոտոշան, Ռոման եւ Թըրգու Օկնա քաղաքներ, որոնք հարուստ են հայկական ժառանգությամբ:

# Երիտասարդ թատերական ռեժիսորների ներկայացումները կցուցադրվեն համանուն փառատոնի շրջանակում

Հայաստանի թատերական գործիչների միությունն ինչպես անցյալ տարի, այս տարի եւս անցկացվում է Երիտասարդ թատերական ռեժիսուրայի VIII հանրապետական փառատոնը:

Այս տարի փառատոնին ներկայացվել է 16 ներկայացում՝ Երեւանից, Վանաձորից, Գյումրիից, Թբիլիսիից:

Փառատոնին ներկա կգտնվի Մոսկվայից ժամանած փորձագետների խումբը, որի նպատակն է ընտրել մեկ ներկայացում Մոսկվայի թատերական միությունների կոնֆեդերացիայի երիտասարդական ծրագրի մասնակցության համար: Այդ ծրագրի շրջանակում նախատեսված փառատոնը կայանալու է 2014թ-ի ամռանը՝ Մինսկում (Բելառուսիա): ԱՊՀ յուրաքանչյուր երկրից մասնակցելու է մեկ ներկայացում: Նաեւ տեղի են ունենալու երիտասարդ դրամատուրգների, բեմանկարիչների եւ թատերագետների դասընթացներ:

Երիտասարդ թատերական ռեժիսուրայի VIII հանրապետական փառատոնին մասնակցում են մինչեւ 35 տարեկան բեմադրիչների այն աշխատանքները, որոնք բեմադրվել են նախորդ թատերաշրջանի ընթացքում:

Նշենք, որ ներկայացումների քննարկումներն անցնում են անվանի մասնագետների, երիտասարդ թատրագետների եւ հանդիսատեսի մասնակցությամբ, որը կգլխավորի ՌԴ ժող.արտիստ, Չեխովի անվան ՄԽՏ-ին կից Մեյերխոլդի անվան մշակութային կենտրոնի ղեկավար Վիկտոր Ռիժակովը:

Փառատոնին կմասնակցեն երիտասարդ բեմադրիչներ Նորա Գրիգորյանը, Գոռ Մարգարյանը, Մարիամ Սարյանը, Վահան Բադալյանը, Արմեն Սարգսյանը, Կարապետ Բալյանը, Զարուհի Անտոնյանը, Արշալույս Հարությունյանը, Գայանե Գրիգորյանը, Գագիկ Մելքումյանը, Հակոբ Ազիզյանը, Իշխան Ղարիբյանը, Հարություն Գալֆայանը, Տիգրան Ավետիսյանը, Հայկազ Փայտյանը, Վարդուհի Գրիգորյանը:

Առաջին անգամ փառատոնը անցկացվել է 2006 թ.-ին: Այն հիմնադրվել է ՀԹԳՄ կողմից, ՀՀ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր Երվանդ Ղազանչյանի նախաձեռնությամբ:

Փառատոնն անցկացվում է մշակույթի նախարարության աջակցությամբ եւ կտեւի մինչեւ նոյեմբերի 6-ը:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

# Հանդիսություն՝ նվիրված գուսան Ջաքարյանի ծննդյան 90-ամյակին

*Վահագնիում բացվեց գուսանի կիսանդրին*

Հոկտեմբերի 26-ին դարձյալ տոնական տրամադրություն էր տիրում Վահագնիի Անտոն Քոչինյանի անվան միջնակարգ դպրոցի մերձակա հրապարակում: «Լոռու ձոր» հայրենակցական միության նախաձեռնությամբ տեղի ունեցավ հանդիսություն՝ նվիրված անվանի գուսան Սարգիս Ջաքարյանի 90-ամյակին: Հանդիսավարն էր «Հորովել» երգի-պարի համույթի տնօրեն եւ մեներգիչ Արմեն Ներսիսյանը:



Օրվա խորհուրդը ներկայացրեց «Լոռու ձոր» ՀՄ նախագահ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգո Երիցյանը: Նա հիշեցրեց, որ մեկ շաբաթ առաջ սկսվել են Ա. Քոչինյանի 100-ամյակին նվիրված միջոցառումները, իսկ այդ օրն սկսվում են գուսան Ջաքարյանի հոբելյանին նվիրված հանդիսությունները, որոնք կավարտվեն նրա ծննդյան օրը՝ դեկտեմբերի 27-ին: Ս. Երիցյանը նշեց, որ Երեւանում բացվել է Ա. Քոչինյանի կիսանդրին, նրան նվիրված նամականիշ է թողարկվել, իսկ նախօրեին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի պետական ակադեմիական թատրոնում մեծ շուքով նշվել է Ա. Քոչինյանի հոբելյանը:

«Սարգիս Ջաքարյանը մեր ժամանակի գուսանական արվեստի լավագույն ներկայացուցիչներից էր: Նա Լոռվա գուսան էր, բայց նրա ստեղծագործությունները մեծ ժողովրդականություն վայելեցին ոչ միայն մեր պետությունում, այլեւ նրանից դուրս: Հիշենք նրա երգերը՝ նվիրված Ե. Չարենցին, Հ. Թումանյանին, Սայաթ-Նովային: Նա մարդ-անհատ էր, ով սեր ու պատկառանք էր սերմանում մարդկանց եւ հայրենիքի նկատմամբ: Գուսանն ունի երկու երգ՝ նվիրված Ա. Քոչինյանին: Մեզ հաջողվեց գտնել գուսանի երգերի տեքստերը, որոնցից մեկի երաժշտությունը վերականգնեց եւ գործիքավորեց «Հորովելի» գործիքային մասի ղեկավար Էլմիրա Կռոյանը: Մենք այս ընթացքում պատրաստել ենք գիրք՝ նվիրված գուսանի կյանքին եւ գործունեությանը, որի տեսական մասի հեղինակը բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մելս Սանթոյանն է: Գրքում, որը կազմել եմ ես, տպագրվել են նաեւ գուսանի ժամանակակիցների՝ մտավորականների, ընկերների շուրջ 40 հուշագրություններ: Այդ գրքում տեղ են գտել եւ վերականգնվել են 30 երգեր, որոնց մեծ մասը վերականգնվել են վերջին տարիներին: Մինչ այդ, գիրքը տպագրվելուց առաջ շրջանառության մեջ էր գուսանի շուրջ 10 երգ: Միայն երգերի նոտագրման եւ վերականգնման հսկայական աշխատանք է կատարվել: Այդ գրքի շնորհանդեսը տեղի կունենա ե՛ւ Վանաձորում, ե՛ւ Երեւանում: Լույս է տեսել նաեւ գուսանի երգարանը, որը կնպաստի նրա երգերի մասսայականացմանը»,- ասաց Ս. Երիցյանը:

Նա դպրոցի տնօրեն Աղունիկ Ներսիսյանին նվիրեց ինչպես գուսան Ջաքարյանի մասին գիրքը, այնպես էլ Վլադիմիր Պետրոսյանի «Անտոն Քոչինյանի ժամանակը» գիրքը եւ Ա. Քոչինյանի մասին հուշերի ժողովածուն: Ս. Երիցյանը շնորհակալություն հայտնեց ՀՀ նախագահին, ՀՀ Կառավարությանը, Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանին, Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանին, Գուգարաց թեմի առաջնորդ, գերաշնորհ տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանին, Վահագնիի գյուղապետ Պետրոս Քոչինյանին՝ Լոռու մեծերից երկուսի՝ Ա. Քոչինյանի եւ գուսան Ջաքարյանի հոբելյանները նշելուն աջակցելու համար:

Գուսան Ջաքարյանի արվեստի վերաբերյալ խոսք ասացին եւ նրա մարդկային հատկանիշները բնութագրող հուշեր պատմեցին Վանաձորի պատվավոր քաղաքացի, ՀԿԿ Կիրովականի երկարամյա առաջին քարտուղար Հայկ Օհանյանը, Վանաձորի պատվավոր քաղաքացի, Լոռու մարզի աշխատանքի եւ պատերազմի վետերանների խորհրդի նախագահ Արտեմ Մանուչարյանը, անվանի բանաստեղծ, մանկագիր, ծնունդով վահագնեցի Լիպարիտ Սարգսյանը, գուսանի ժամանակակից Սեյրան Ղազարյանը, համայնքապետ Պ. Քոչինյանը եւ ուրիշներ:

Ս. Երիցյանը ներկայացրեց Ա. Քոչինյանի եւ գուսան Ջաքարյանի կիսանդրիների հեղինակ Սարգիս Ղարիբյանին (Սեւո), ով իր խոսքում երախտագիտություն հայտնեց հոբելյանական միջոցառումների կազմակերպիչներին եւ ասաց, որ պատրաստակամ է կերտել Լոռու բոլոր մեծերի քանդակները եւ հավերժացնել նրանց հիշատակը: Ապա դպրոցի բակում բացվեց գուսանի կիսանդրին: Բացման պատիվն ընձեռվեց Պ. Քոչինյանին եւ Ս. Երիցյանին:

Հանդիսության համերգային մասում գուսան Ջաքարյանի երգերի կատարումներով հանդես եկան «Հորովելի» մեներգիչներ Ստեփան Դալլաքյանը եւ Սուսաննա Զաղինյանը: Ժողովրդական մեղեդիների կատարմամբ հանդես եկավ փոքրիկ դուդուկահար Վահան Սոֆյանը:

Օրեր առաջ՝ հոկտեմբերի 22-ին, Վանաձորի Հովհաննես Աբելյանի անվան թատրոնի ճեմասրահում բացվել էր Ա. Քոչինյանի կյանքին ու գործունեությանը նվիրված լուսանկարների եւ արխիվային նյութերի ցուցահանդես: Բացման ժամանակ ՀՀ պետական արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը խոստացել էր ներկայացված ցուցանմուշները նվիրել Վահագնիի միջնակարգ դպրոցին: Թատրոնի տնօրեն Հովիկ Չախմախչյանը հանդիսությունից հետո դրանք հանձնեց դպրոցին:

ԱՐԹՈՒՐ ՄԻԿՈՅԱՆ
Վանաձոր

# Ռուբեն Հայրապետյան. «Հավաքականի ղեկը պետք է վստահվի այնպիսի մարզչի, որը Եվրո-2016-ի ուղեգիր կապահովի»

***Երեկ կայացած մամուլի ասուլիսում ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանն ամփոփեց 2014-ի ֆուտբոլի աշխարհի առաջնության ընտրական մրցափուլում Հայաստանի ազգային հավաքականի ելույթները, անդրադարձավ հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանի հրաժարականին եւ նոր մարզչի ընտրության հետ կապված բանակցությունների ընթացքին:***




«Ընտրական մրցաշարում հավաքականի առջեւ խնդիր էր դրված աշխարհի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգիր նվաճել: Եվ քանի որ խնդիրը չկատարվեց, ուստի համարում եմ ընտրական փուլը ձախողված: Շատ եմ ափսոսում, որ Վարդան Մինասյանը որոշել է չշարունակել աշխատանքը հավաքականում: Կցանկանայի նրա հետ աշխատել, քանի որ լավ ծանոթ եմ նրա ներուժին, մարզչական ունակություններին: Նա դեռ շատ անելիք ունի հայկական ֆուտբոլում: 2 անգամ փորձել եմ համոզել, որ փոխի որոշումը, սակայն չի ստացվել: Մինասյանը դեռեւս գարնանն էր հրաժարականի դիմում ներկայացրել: Այն ժամանակ դիմումը մերժեցինք: Այսօր գործկոմի նիստում գլխավոր մարզիչը ներկայացնելու է իր հաշվետվությունը: Կփորձենք մեկ անգամ եւս համոզել, որ մնա: Նա միջազգային մակարդակի մարզիչ է, հպարտանում եմ նրանով: Ամեն դեպքում պետք է շնորհակալություն հայտնել Մինասյանին իր աշխատանքի համար:

Հիշեք, թե ՖԻՖԱ-ի դասակարգման աղյուսակում ո՞ր տեղում էր հավաքականը, երբ Վարդան Մինասյանը ստանձնեց գլխավոր մարզչի պաշտոնը: Իսկ այսօր հավաքականը իր համար ռեկորդային՝ 38-րդ հորիզոնականում է: Սա Մինասյանի աշխատանքի արդյունքն է: Նրան մարզչական աշխատանքում մեծ ապագա է սպասում», նշեց Ռուբեն Հայրապետյանը:

ՀՖՖ նախագահը նշեց, որ ընտրական մրցաշարում լավ խաղերի կողքին եղան նաեւ տխուր ու ցավալի հանդիպումներ: Ռուբեն Հայրապետյանին մինչ օրս էլ անհասկանալի է, թե ինչպես հավաքականը Երեւանում պարտվեց Մալթայի ընտրանուն, որին նույնիսկ 9 հոգով խաղալիս իրավունք չունեինք զիջելու: Մյուս պարտությունների պատճառն ըստ նախագահի, կազմի հետ կապված խնդիրներն էին: Ցավոք, հավաքականի պահեստայինների նստարանն այնքան էլ երկար չէ, որ վնասվածք ունեցող կամ որակազրկված ֆուտբոլիստներին հնարավոր լինի համարժեքորեն փոխարինել:

Իսկ լավագույն խաղը Ռուբեն Հայրապետյանը համարում է բուլղարացիների հետ երեւանյան հանդիպումը, որում հավաքականը բոլոր առումներով վրեժխնդիր եղավ մեկ տարի առաջ Սոֆիայում տեղի ունեցածի համար:

Ռուբեն Հայրապետյանը տեղեկացրեց, որ հավաքականի նոր գլխավոր մարզչի հարցով ներկայումս բանակցություններ են ընթանում: Վարդան Մինասյանը ՀՖՖ նախագահին խորհուրդ է տվել հավաքական հրավիրել իսպանացի կամ իտալացի մարզչի, որոնց տակտիկական մտահղացումները մոտ են մեր հավաքականի խաղաոճին: Ֆեդերացիայի նախագահն առաջին հերթին ցանկացել է հավաքականի ղեկին տեսնել ֆրանսահայ Միշել Տեր-Զաքարյանին, որին դեռեւս 2009-ին է փորձել հրավիրել, սակայն վերջինս այս անգամ էլ հրաժարվել է: Իսկ ինչ վերաբերում է Սերխիո Մարգարյանին, ապա ուրուգվայահայ մարզիչը գրավոր դիմել է ֆեդերացիային, որ այդ թեմայով խոսակցություններ չծավալվեն:

Ըստ Ռուբեն Հայրապետյանի, հավաքականի նոր մարզիչը պետք է լինի այն անձը, որը պատրաստ է 2016-ի Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգիր նվաճել: Այլ խնդիր հավաքականի առջեւ Եվրո-2016-ի ընտրական մրցաշարում չի կարող դրվել: ՀՖՖ նախագահը նշեց, որ մեր հավաքականի մասնակցությունն աշխարհի կամ Եվրոպայի առաջնությունների եզրափակիչ փուլին իր կյանքի նպատակն է:

Ռուբեն Հայրապետյանն ընդունեց, որ ժամանակին օտարերկրյա մարզիչներին հրավիրելու հարցում սխալվել է, եղել են մարզիչներ (օրինակ՝ ֆրանսիացի Բեռնար Կազոնին), որոնք զբոսաշրջիկի կարգավիճակով են աշխատել ՀՀ հավաքականում: Այսուհետ հավաքականի օտարերկրացի մարզիչը աշխատանքի ժամանակահատվածում պետք է բնակվի Երեւանում, որտեղ մշտապես իր ուշադրության կենտրոնում պահի թեկնածուներին:

Ռուբեն Հայրապետյանը նշեց, որ երիտասարդական հավաքականի անհաջող ելույթների մեղավորը գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանն էր, ուստի նա պաշտոնանկ արվեց: Իսկ մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականի գլխավոր մարզիչ Վարազդատ Ավետիսյանի աշխատանքը ՀՖՖ նախագահը նորմալ համարեց, քանի որ առանձնակի սպասելիքներ չկային, վաղուց պարզ էր, որ ֆուտբոլիստների ներուժը բարձր չէ:

Ռուբեն Հայրապետյանն իր ափսոսանքը հայտնեց Յուրի Վարդանյանի որդու հետ պատահածի համար, նշելով, որ հայրը պատասխանատվություն չի կրում իր չափահաս որդու արարքի համար: Նման դեպք կարող էր յուրաքանչյուրի հետ էլ տեղի ունենալ, ոչ մի հայր չէր ցանկանա, որ որդին թմրանյութերի հետ կապ ունենա: Ըստ ՀՖՖ նախագահի, Յուրի Վարդանյանը մեր սպորտի կենդանի լեգենդներից մեկն է եւ չպետք է նրա ընտանիքի հետ կապված շահարկումներ արվեն:

Վոլեյբոլի ֆեդերացիայի նոր նախագահի ընտրությունների հետ կապված աղմուկի մասին էլ Ռուբեն Հայրապետյանը հետեւյալն ասաց. «Վոլեյբոլի ֆեդերացիայի նախագահի պաշտոնն իրենից ի՞նչ է ներկայացնում, որ ընտրություններն անհարթ լինեն: Այդ ֆեդերացիան էլ ՀԱՕԿ-ի նման հասարակական մի կազմակերպություն է: Կարծում եմ, որ Արթուր Բաղդասարյանը կարող է բարձրացնել վոլեյբոլի ֆեդերացիայի հեղինակությունը: Պարտադի՞ր է, որ անպայման ԲՀԿ-ից լինեն: Հայկական սպորտի ղեկավարը սպորտի նախարարն է»:

# «Արարատն» ամրապնդում է առաջատարի դիրքերը



Երեկ կայացան ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնության 8-րդ տուրից հետաձգված հանդիպումները: «Արարատը» թեեւ «Բանանցի» հետ մրցավեճում խաղն ավարտեց գոլազուրկ ոչ-ոքի, սակայն ավելի ամրապնդեց առաջատարի իր դիրքերը: Բանն այն է, որ արարատցիներին հետապնդող «Փյունիկի» ֆուտբոլիստները «Միկայի» հետ մրցավեճում անհաջող խաղացին՝ կրելով 0-3 հաշվով պարտություն: «Միկայից» գոլերի հեղինակներ դարձան Արեգ Ազատյանը, Արման Հակոբյանն ու Ալիկ Առաքելյանը: «Միկան» ընդհատեց առանց հաղթանակների 5 խաղերի շարքը:

Անհաջող ելույթներն է շարունակում երկրի չեմպիոն «Շիրակը», որը կրեց 2-րդ անընդմեջ պարտությունը: Այս անգամ գյումրեցիները Կապանում 0-2 հաշվով զիջեցին «Գանձասարին»: Հաշիվն առաջին խաղակեսում բացեց Շոթա Ջիքիան, իսկ ընդմիջումից հետո 2-րդ գոլի հեղինակ դարձավ Նարեկ Բեգլարյանը: Բարձրագույն խմբի նորեկ «Ալաշկերտն» էլ հերթական պարտությունը կրեց՝ սեփական հակի տակ 1-2 հաշվով զիջելով «Ուլիսին»: Առաջինը հաջողության հասան հյուրերը, որոնցից աչքի ընկավ Ջորջ Օդհամբոն: Հետագայում Միհրան Մանասյանին հաջողվեց հավասարեցնել հաշիվը, սակայն խաղավարտից 2 րոպե առաջ Պատոն տուգանային հարվածով հաղթանակ պարգեւեց «Ուլիսին»: Այս խաղում էլ «Ալաշկերտի» գլխավոր մարզչի պարտականությունները կատարում էր ակումբի սեփականատեր Բագրատ Նավոյանը: Այսօր նա թիմի ֆուտբոլիստներին կներկայացնի նոր գլխավոր մարզչին: «Ալաշկերտի» ղեկը վստահվելու է Արմեն Գյուլբուդաղյանցին:

**Մրցաշարային աղյուսակ**

| | Խ | Հ | Ո | Պ | Գ | Մ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. Արարատ | 10 | 6 | 3 | 1 | 14-4 | 21 |
| 2. Գանձասար | 10 | 4 | 4 | 2 | 23-14 | 16 |
| 3. Փյունիկ | 10 | 4 | 4 | 2 | 21-15 | 16 |
| 4. Միկա | 10 | 3 | 6 | 1 | 12-8 | 15 |
| 5. Շիրակ | 10 | 3 | 3 | 4 | 16-15 | 12 |
| 6. Բանանց | 10 | 2 | 6 | 2 | 8-8 | 12 |
| 7. Ուլիս | 10 | 2 | 3 | 5 | 9-15 | 9 |
| 8. Ալաշկերտ | 10 | 0 | 3 | 7 | 11-35 | 3 |

**Ռմբարկուները**

| | | |
|---|---|---|
| Արտակ Դաշյան | «Գանձասար» | 7 |
| Նարեկ Բեգլարյան | «Գանձասար» | 6 |
| Սերժ Դեբլե | «Շիրակ» | 6 |
| Գեւորգ Նռանյան | «Արարատ» | 5 |
| Ալեքսանդր Ռակիչ | «Արարատ» | 5 |
| Անդրանիկ Բարիկյան | «Շիրակ» | 5 |
| Սարգիս Բալոյան | «Փյունիկ» | 5 |
| Միհրան Մանասյան | «Ալաշկերտ» | 5 |

# Մովսիսյանն ու Օզբիլիսը ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստների ցանկում են

**Ռուսական Sports.ru կայքը հրապարակել է ֆուտբոլի ՌԴ պրեմիեր լիգայում հանդես եկող ամենաբարձր վարձատրվող 90 ֆուտբոլիստների ցանկը, որոնց թվում են նաեւ Մոսկվայի «Սպարտակի» եւ ՀՀ հավաքականի խաղացողներ Յուրա Մովսիսյանն ու Արաս Օզբիլիսը: Ընդ որում, նշված է միայն տարեկան «մաքուր» աշխատավարձը հարկերը վճարելուց հետո, առանց պարգեւավճարները հաշվի առնելու:**

**Այդ ցուցակում Յուրա Մովսիսյանը տարեկան 2,4 մլն եվրո աշխատավարձով 25-րդ տեղում է, իսկ Օզբիլիսը 2 մլն-ով բաժանում է 34-47-րդ տեղերը: ՌԴ պրեմիեր լիգայի ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստը «Զենիթի» հարձակվող Հալկն է՝ 7 մլն եվրո:**



# «Կայրաթը» հետաքրքրվում է Գեւորգ Ղազարյանով

**Ըստ Sports.kz-ի, ՀՀ հավաքականի եւ Կարագանդայի «Շախտյորի» կիսապաշտպան Գեւորգ Ղազարյանը ձմռանը հավանաբար կտեղափոխվի ղազախական մեկ այլ թիմ՝ «Կայրաթ», որտեղ ներկայումս խաղում է Արթուր Եդիգարյանը:**

**Գեւորգ Ղազարյանի խաղը հետաքրքրել է «Կայրաթի» գլխավոր մարզիչ Վլադիմիր Վայսին, որը ցանկանում է նրան թիմ հրավիրել: Նշենք, որ Ղազարյանի տրանսֆերային իրավունքները պատկանում են Դոնեցկի «Մետալուրգին»: «Շախտյորում» Ղազարյանը վարձավճարով է հանդես գալիս:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

*Հավելված*
*ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի*
*29 հոկտեմբերի, 2013թ. թիվ 21-Լ հրամանի*

*Վ.Գ.Շահինյան*

# ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ

**ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարեւոր գործերի քննիչի թափուր պաշտոնի համար**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարեւոր գործերի քննիչի մեկ թափուր պաշտոնի համար անցկացվող բաց մրցույթի մասին**

Պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների վերաբերյալ ներկայացվող պահանջները.

1. Հատուկ քննչական ծառայությունում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, Հայաստանի Հանրապետությունում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան օտարերկրյա պետությունում ձեռք բերած, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության 60 տարին չլրացած այն քաղաքացին, ով՝

ա) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց) կամ պահեստազորի սպա է,

բ) տիրապետում է գրական հայերենին

2. Չունի Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. փետրվարի 13 թիվ 143-Ն որոշմամբ հաստատված ցանկով հատուկ քննչական ծառայության ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատներ եւ հիվանդությունները

3. Հատուկ քննչական ծառայության պաշտոնի կարող են նշանակվել նաեւ 1-ին մասի «ա» ենթակետի պահանջներին չհամապատասխանող, սակայն դիմելու պահին «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ-ե» կետերով նախատեսված հիմքերով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ 13-րդ հոդվածի համաձայն՝ մինչեւ 27 տարին լրանալը պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած եւ պահեստազորում հաշվառված անձինք:

4. Հատուկ քննչական ծառայությունում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ով՝

ա) մինչեւ նշանակումը չունի դատախազի կամ քննիչի առնվազն 3 տարվա ստաժ,

բ) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

գ) դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից,

դ) դատապարտվել է հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից,

ե) գտնվում է քրեական հետապնդման մեջ,

զ) չի համապատասխանում 1-ին կետով սահմանված պահանջներին:

5. ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարեւոր գործերի քննիչի թափուր պաշտոնը համալրելու համար ներկայացվող փաստաթղթերը՝

ա) դիմում՝ ուղղված Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետին.

բ) անձը հաստատող փաստաթուղթ եւ պատճենը,

գ) բարձրագույն իրավաբանական կրթության առկայությունը հավաստող փաստաթուղթ եւ պատճենը,

դ) աշխատանքային գրքույկ եւ պատճենը կամ քաղվածք,

ե) «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված կարգով պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելը կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելը կամ տարկետում ունենալը հավաստող փաստաթուղթ եւ պատճենը (եթե հավակնորդը արական սեռի է),

զ) Տեղեկանք՝ քննիչի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների եւ հիվանդությունների բացակայության մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. փետրվարի 13 թիվ 143-Ն որոշման,

է) հայտարարություն՝ դատապարտված կամ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չլինելու մասին,

ը) երկու լուսանկար՝ 3x4 չափսի

Հավակնորդը փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:

***Մրցույթն անցկացվում է հարցազրույցի եղանակով, որն իրականացվում է հատուկ քննչական ծառայության պետի կողմից հաստատված՝ ծառայության ծառայողների ատեստավորման ծրագիր-հարցաշարի հիման վրա /www.investigatory.am/***

***Մրցույթն անցկացվելու է 2013թ. դեկտեմբերի 2-ին՝ ժամը 11 00-ին,***

***Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետ է համարվում 2013թ. նոյեմբերի 22-ը***

***ՀՀ գլխավոր դատախազության շենքում՝ /Վ.Սարգսյան 5/,***

***ՀՀ հատուկ քննչական ծառայություն (5-րդ հարկ)***

***Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակազմի անձնակազմի բաժինը /հեռ. 511-684, 511-679 /***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի շենքերի, շինությունների, տրանսպորտային միջոցների, «Սերվերային» համալիրի, ցանցային սարքավորումների, ՀՀ կենտրոնական բանկում առկա բոլոր տեսակի անհատական համակարգիչների, արտասահման գործուղվող աշխատակիցների բժշկական ծախսերի ապահովագրության նպատակով ապահովագրական կազմակերպություն ընտրելու համար հրապարակային մրցույթի կազմակերպման մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը հայտարարում է հրապարակային մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի շենքերի եւ շինությունների, տրանսպորտային միջոցների, «Սերվերային» համալիրների, ցանցային սարքավորումների, ՀՀ կենտրոնական բանկում առկա բոլոր տեսակի անհատական համակարգիչների, արտասահման գործուղվող աշխատակիցների բժշկական ծախսերի ապահովագրման նպատակով ապահովագրական կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետությունում գրանցված եւ ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող իրավաբանական անձինք, որոնք մրցույթի հայտը ներկայացնելու պահին չունեն ժամկետանց պարտավորություններ՝ Հայաստանի Հանրապետության հարկային եւ սոցիալական ապահովագրության վճարների գծով:

Մրցութային առաջարկները կարող են ներկայացվել ինչպես մեկ, այնպես էլ բոլոր լոտերի համար միասին:

Մրցութային առաջարկությունները անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6:

Մրցութային հայտերի ընդունման վերջին ժամկետն է 2013թ. դեկտեմբերի 9-ին ժամը 16-00:

Մրցույթի հայտերի բացման օրն ու ժամն է 2013թ. դեկտեմբերի 13-ին ժամը 16-00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2013թ. դեկտեմբերի 20-ին ժամը 16-00:

Մրցույթին մասնակցելու հրապարակային ծանուցումը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու ծանուցումը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն հեռ. 59-28-05, 59-28-02, ներքին՝ 18-05, 18-02:

**Հասարակայնության հետ կապերի ծառայություն**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Ռուսաստանի Դաշնությունում 2014թ. հրապարակվող պարբերականներ ձեռքբերելու նպատակով բաժանորդագրող (մատակարարող) կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ (այսուհետեւ՝ Մրցույթ)՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Ռուսաստանի Դաշնությունում 2014թ. հրապարակվող պարբերականների բաժանորդագրություն իրականացնող կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Մրցույթին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2013թ. դեկտեմբերի 9-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2013թ. դեկտեմբերի 9-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2013թ. դեկտեմբերի 13-ին ժամը 16-00:

Մրցույթի հաղթողը որոշվելու է՝

1) այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին եւ ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձրն է:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին՝ 18-02, 18-05:

Սույն հայտարարության մեջ նշված Մրցույթի հետ կապված բողոքները կարող են ներկայացնել գնումների բողոքարկման խորհուրդ՝ Գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

**Հասարակայնության հետ կապերի ծառայություն**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից 2014թ. ընթացքում վառելանյութ ձեռք բերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ 2014թ.-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից վառելանյութ ձեռք բերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2013թ. դեկտեմբերի 9-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2013թ. դեկտեմբերի 9-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2013թ. դեկտեմբերի 13-ին ժամը 16-00:

Բաց ընթացակարգում հաղթողը որոշվելու է՝

1) այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին եւ ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձրն է:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. (010) 592-802, 592-805, ներքին՝ 18-02, 18-05:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերի թղթային տարբերակը ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

**Հասարակայնության հետ կապերի ծառայություն**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետությունում 2014թ. հրապարակվող թերթերի ձեռքբերման նպատակով բաժանորդագրող (մատակարարող) կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ (այսուհետեւ՝ Մրցույթ) ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետությունում 2014թ. հրապարակվող թերթերի ձեռքբերման նպատակով բաժանորդագրություն իրականացնող կազմակերպություն ընտրելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Մրցույթին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված

2) գործունեությանը.

3) մասնագիտական փորձառություն.

4) տեխնիկական միջոցներ.

5) ֆինանսական միջոցներ.

6) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն, ռուսերեն կամ անգլերեն լեզուներով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2013թ. դեկտեմբերի 9-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2013թ. դեկտեմբերի 9-ի ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2013թ. դեկտեմբերի 13-ին ժամը 16-00:

Մրցույթի հաղթողը որոշվելու է՝

1) այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին եւ ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձրն է:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին՝ 18-02, 18-05:

Սույն հայտարարության մեջ նշված Մրցույթի հետ կապված բողոքները կարող են ներկայացնել գնումների բողոքարկման խորհուրդ՝ Գնումների մասին ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

**Հասարակայնության հետ կապերի ծառայություն**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 30.10.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: